



Վենետիկ. Միթրարքան Ռիխտի Կանառի զիտաւոր սրահը:
Հայերէն տպագրող գրքների շանմարանը:


ՄԵԾ ՏԾԻ ՆԱԽՍՈՆԱԿԻՆ

Հայոց գրերի գիւտի 1500-ամեայ և հայ տպագրութեան 400-ամեայ միացեալ յօրելեանների տօնը սկսվում է այս տարի հոկտեմբերի 13-ին և վերջանալու է մի տարի յետոյ, էջմիածնում, փառավոր ակտով։ Մենք ուրիշն ներկայ տարվայ հոկտեմբերի 13-ին կատարելու ենք այս համազգային կրկնակի տօների նախատօնակը և պատրաստվելու ենք արժանավոր շուրջով բուն տօնական հանդէսը կատարելու մի տարի յետոյ։


Եթէ ուրիշ ազգերի մէջ գրերի գիւտը և տպագրութեան երեան գալը քաղաքակըրթական նշանակութիւն ունին, — ամենալայն մտքով ըմբռնելով քաղաքակըրթութիւնը — մեր մէջ չնորհիվ պատմական պայմանների դասավորութեան՝ ազգային այրութեանի գիւտը ունեցավ աւելի մեծ նշանակութիւն։ առանց չափազանցութեան մէջ ընկնելու կարելի է ասել, թէ հայոց այրութեանը պահպանեց հայ ազգի գոյութիւնը Առանց հա-

յերէն այրութեանի մենք ոչ հայ լեզվով ժամերգութիւն կունենայինք, ոչ հայերէն գրականութիւն և ոչ. . հայ մարդ, Այս աշխարհում, որ մեր պատմական հայրենիքն է՝ այժմ էլ բնակվելիս կլինէին մարդիկ — պարսիկներ, յոյներ, ասորիներ, թուրքեր..., նախկին հայերի օտարացած սերունդներ, ինչպէս ներկայումս կան հազարավոր զեհացիներ, հայերից սերված։ Հայերի մասին ներկայումս միայն պատմական գրվածքների մէջ կմնար յիշատակութիւն՝ ինչպէս փիւնիկեցիների, լիւգացիների, բարելացիների մասին, որոնք երբեմն ապրել են, գործել և անհետացել պատմական ասպարէզից։

Մենք իրեն հայ, իրեն հին պատմական հայ ազգի անմիջական սերունդ և ժառանգ, դեռ ապրում ենք և պիտի ապրենք՝ շնորհիվ միմիայն հայերէն գրերի, որ մեզանից 1500 տարի առաջ հրկնեց ու իրազործեց հայ ազգի ամենամեծ զավակն ու բարերարը, ու Մեսրոպ-Մաշտոցը, հայերէն տպա-



ՆՈՐ-ԶՈՒՂԱ. Ամենափրկիչ հուակաւոր վանքը, որի տպարանից 1640 թ. լոյս տեսաւ առաջին անգամ Հարանց վարք գիւղը ընդառնակ յիշատակարանով։



Վարագ. Աղօթիւ Վասպուրականի բոյնը, ուր հաստատեց հայ տպարան Մըհմեան Հայրիկը։

գրութիւնը, հեշտ միջոցով էժանացնելով ու բաղմապատկելով գրքերի քանակութիւնը՝ իւր կողմից եկաւ նպաստելու և լրացնելու այն գերը, որ կատարել է հայ այրութեան մեր ազգի պատմութեան մէջ։

Ահա այս կրկնակի մեծ ազգային տօնը կատարելու բախտը և պարտականութիւնը վիճակին է մեզ, ժամանակակից հայերին։ Այս տօնի առաջ պէտք է տեղի տան կուսակցականութիւն, կրօնական խորութիւն, անձնական նկատութեան, ամեն անհատ, որ իրան հայ է զգում, որ կարգում է հայերէն գիր, որ խօսում է հայերէն՝ իւր սեփականը պէտք է համարէ այս յօրելեանը. ամեն մէկը պէտք է ձգտի խօսքով ու գործով արձագանք տալու ընդհանուր հայկական տօնին և յակերժայնելու նըտ յիշուակը։